

Ա Ռ Ա Ր Կ ՈՒԹ Յ ՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի ԹԻՎ ԹԻՎ 8-Ա, 9-Ն, 11-Ա ԵՎ 12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 8-Ա որոշման վերնագրից անհրաժեշտ է հանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ», ԵՎ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» նախադասությունը: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի վերնագրում բերվում է միայն փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը:

Որոշման նախաբանում «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածին կատարված հղումը սխալ է: Հղումը կատարվել է ուժը կորցրած ճանաչված իրավական ակտին: Իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածին հղում կատարելիս անհրաժեշտ է նշել նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:

Որոշման բովանդակության «ա» կետում լրացումը թերի է խմբագրված: Նշված չէ, 103000 (մեկ հարյուր երեք հազար դրամ) դրույքաչափը պաշտոնային դրույքաչափն է, թե սահմանված դրույքաչափը:

Թիվ 9-Ն որոշման վերնագրում և բովանդակության մեջ «և լրացումներ» բառերն անհրաժեշտ է հանել, քանի որ որոշմամբ լրացում չի կատարվել, իսկ նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին հղում կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ իրավական ակտում բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ չեն շարադրվել:

Թիվ 11-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին:

Թիվ 12-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին կատարված հղումը սխալ է: Հղումը պետք է կատարվեր «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասին, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասին և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմանը:

Որոշմամբ չի պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ սահմանված «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու» կարգի 3-րդ և 9-րդ կետերի պահանջներով նախատեսված ընթացակարգերը:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
30.04.2020թ.